

MASTEREMACO S 488 (EMACO S 88 C)

Դարձունակ (тиксотропический) տիպի, չկծկվող, արագ պնդացող, պոլիմերային ֆիբր պարունակող չոր բետոնային խառնուրդ է: Նախատեսված է բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաների կառուցվածքային վերանորոգման համար: Մեկ շերտի պատման հաստությունը 20-40մմ է:



Նկարագրություն

MASTEREMACO S 488-ը կիրառման համար պատրաստի նյութ է՝ չոր շաղախային խառնուրդի տեսքով, 2.5մմ լցանյութի առավելագույն խոշորությամբ: Ջրով խառնելիս ձևավորվում է ռեոպլաստիկ, դարձունակ (тиксотропический), չշերտավորվող շաղախ՝ պողպատի և բետոնի հետ լավ հարակցմամբ (ադիեզիայով): **MASTEREMACO S 488**-ը չի կծկվում ինչպես պլաստիկ, այնպես էլ պնդացած վիճակում: Այն չի պարունակում մետաղական լցանյութեր և քլորիդներ: Վերանորոգման աշխատանքների ժամանակ խորհուրդ է տրվում նյութը պատել մակերևութի վրա՝ ծեփելով (набрызг) կամ ծեփակով (кельма)՝ 20-40մմ հաստությամբ, մեկ շերտով: Եթե անհրաժեշտ է վերանորոգվող ավելի հաստ շերտ, ապա պատումը իրականացվում է մի քանի շերտով:

Կիրառման ոլորտ

- բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաների վնասված և քայքայված էլեմենտների վերանորոգում,
- բետոնի պաշտպանություն սուլֆատներ, սուլֆիդներ, քլորիդներ և նման այլ նյութեր պարունակող ագրեսիվ միջավայրից,
- ջրի հետ անմիջական շփում ունեցող էլեմենտների վերանորոգում,
- պարբերաբար բեռնվածության ենթարկվող կրող կոնստրուկցիաների, կամուրջների հենարանների և նման այլ կոնստրուկցիաների էլեմենտների վերանորոգում,
- մեխանիկական արտադրամասերի ծածկերի վերանորոգում (հատկապես շատ հանքային

յուղեր, քսուկային նյութեր պարունակող արտադրամասեր),

- նավահանգիստների նավամատույցների վերանորոգում,
- ուղղաձիգ և առաստաղային մակերևութների վերանորոգում:

MASTEREMACO S 488-ը խորհուրդ չի տրվում կիրառել՝

- կաղապարամածի (опалубка) լցոնման համար (խորհուրդ է տրվում **MASTEREMACO S 88**-ի կիրառումը),
- առանց լրացուցիչ պաշտպանության՝ 5.5-ից պակաս pH ջրածնային ցուցանիշ ունեցող միջավայրի հետ շփման դեպքում:

Մոտավոր ծախս

1մմ պատման հաստության դեպքում 1.92 կգ/մ²:

Ջերմաստիճանի ազդեցություն

MASTEREMACO S 488 նյութը կարելի է կիրառել, եթե ջերմաստիճանը աշխատանքների կատարման ժամանակ +5...+50°C է: Շրջակա միջավայրի ցածր ջերմաստիճանի դեպքում (+5...+10°C) ամրությունն աճում է ավելի դանդաղ: Եթե պահանջվում է ավելի վաղահաս ամրություն, ապա պահանջվում է՝

- պարկերը պահել ցրտից պաշտպանված վայրերում,
- կիրառել շաղախման համար տաք ջուր (+30...+40°C),

• **MASTEREMACO S 488**-ը ծածկել ջերմամեկուսիչ նյութերով,

+5°C-ից ցածր ջերմաստիճանի դեպքում կապվել արտադրող ֆիրմայի հետ: Եթե շրջակա միջավայրի ջերմաստիճանը բարձր է +30°C-ից, ապա միակ խնդիրը վերանորոգիչ շաղախի շարժունակության արագ կորուստն է: Արտաքին բարձր ջերմաստիճանային պայմանների դեպքում խորհուրդ է տրվում իրականացնել հետևյալ միջոցառումները՝

- **MASTEREMACO S 488**-ի պարկերը պահել զով վայրում,
- շաղախման համար սառը ջուր օգտագործել,
- վերանորոգիչ շաղախը պատրաստել օրվա ամենագույն ժամին:

MASTEREMACO S 488 պատրաստելու համար ջրի պահանջը

MASTER-EMACO S 488-ի պատման եղանակը	Կոնսիստենցիա	30կգ չոր շաղախի համար ջրի քանակը լիտրով	
		Նվազ.	Առ.
Ծեփելով	Համաչափ	4,6	4,9
Ծեփակով	Համաչափ	4,6	4,9

Վերանորոգվող նախապատրաստում

մակերևույթի

Այն մակերևույթը, որի վրա պատվելու է **MASTEREMACO S 488**-ը, պետք է լինի հնարավորինս հարթ և մաքուր: Խորհուրդ է տրվում հանգամանորեն մաքրել մեքենաների յուղերի, ճարպերի, փոշու, բետոնի վուլկանացման ապրանքների, քիմիական ազդակների և կցորդումը վատթարացնող մնացած այլ աղտոտումների ցանկացած մնացորդներ: Նյութը պատվելուց առաջ պահանջվում է մշակել արատավոր մասի եզրերը ալմաստ գործիքով՝ մակերևույթին ուղղաձիգ, նվազագույնը 10մմ խորությամբ: քայքայված բետոնը հեռացնելու համար օգտագործել թեթև հորատիչ, ասեղնավոր ատրճանակ կամ ջրաավազաշիթային սարքավորում: Մակերևույթը դարձնել խորդուբորդ: Այդ գործողությունը շատ կարևոր է, քանի որ **MASTEREMACO S 488**-ի լավ կաշունության համար պետք է հենց խորդուբորդ մակերևույթ: Բացի դրանից, անհրաժեշտ է գոյություն ունեցող ամրանը մաքրել ժանգից: Եթե վերանորոգվող կոնստրուկցիան ենթարկված է ուժեղ կոռոզիայի, անհրաժեշտ է այն մշակել հակակոռոզիոն նյութով, ինչպիսին է **MASTERSEAL 300 T**:

Մակերևույթի թռչումը ջրով

Մինչև **MASTEREMACO S 488**-ի շաղախի լցնելը՝ անհրաժեշտ է վերանորոգվող մակերևույթը մանրակրկիտ թռչել ջրով: Ջրի ավելցուկը հարկավոր է հեռացնել խտացրած օդով կամ հնոտիով (betowas): Մակերևույթը պետք է լինի խոնավ, բայց ոչ քայքայ:

MASTEREMACO S 488-ի նախապատրաստում

Ջրի հետ խառնելուց առաջ անհրաժեշտ է՝

- ստուգել, որ **MASTEREMACO S 488**-ի քանակը բավարար է՝ հաշվի առնելով վերջինիս ծախսը (**MASTEREMACO S 488** չոր խառնուրդի 1900կգ՝ 1մ³ վերանորոգման միացություն պատրաստելու համար),
- հանդգնել, որ բոլոր անհրաժեշտ նյութերն ու սարքավորումները (խառնիչներ, սայլակներ, դուլեր, ծեփակներ և այլն) գտնվում են ձեռքի տակ:

Վերանորոգման խառնուրդի ճիշտ պատրաստման համար օգտագործել հետևյալ հրահանգը.

- բացել **MASTEREMACO S 488**-ի պարկերը խառնելուց քիչ առաջ,
- խառնիչում լցնել ջրի նվազագույն քանակություն,
- միացնել խառնիչը, արագ և անընդհատ ավելացնել **MASTEREMACO S 488**-ը: Խառնելու համար անհրաժեշտ է օգտագործել նյութի ողջ պարկը,
- ամրակր ամբողջությամբ դատարկելուց հետո՝ հարկավոր է շարունակել խառնելը ևս 3-4 րոպե, մինչև կոշտուկների վերացումը և խառնուրդի համասեռ դառնալը,
- անհրաժեշտության դեպքում ավելացնել ջուր (աղյուսակում նշված քանակության սահմաններում) մինչև պահանջվող թանձրություն ստանալը և նորից խառնել 2-3 րոպե: Ջրի պարունակությունը կարող է թեթևակի տարբերվել վերը նշված աղյուսակից՝ շրջակա միջավայրի ջերմաստիճանից և հարաբերական խոնավությունից կախված: Շոգ և չոր եղանակին կարող է պահանջվել ավելի շատ ջուր, սառը և խոնավ եղանակին՝ ավելի քիչ: Փոքր շաղախների համար կարելի է օգտագործել գայլիկոնիչ պարուրածն գլխիկով: Խորհուրդ է տրվում **MASTEREMACO S 488** նյութը ձեռքով խառնել:

MASTEREMACO S 488-ի կիրառումը

MASTEREMACO S 488-ը պատվում է նախապատրաստված մակերևույթին պողպատե ծեփիչի օգնությամբ: Պատման հաստությունը պետք է լինի 1-4սմ-ի սահմաններում: Եթե շերտի հաստությունը գերազանցում է 4սմ-ը, 24 ժամ հետո նույն եղանակով պատվում է խառնուրդի երկրորդ շերտը: Ցանկության դեպքում մակերևույթը կարելի է դարձնել հարթ՝ փայտե, պլաստմասե կամ սինթետիկ սպունգային հարթիչի միջոցով: Հարթիչով մշակումը կարելի է սկսել միայն այն ժամանակ, երբ վերանորոգիչ խառնուրդը հարակցվել է, այսինքն, երբ այն սեղմելիս մատները թողնում են թեթև հետք:

Խնամք

Անհրաժեշտ է նվազագույնը 24 ժամ, իսկ շոգ, չոր, քանոտ եղանակին՝ մինչև 2 օր՝ ապահովել վերանորոգված տեղամասի խոնավությունը: Դրա համար օգտագործում են ցեմենտ պարունակող նյութերի խնամքի ստանդարտ մեթոդներ (մակերևույթի ծածկումը թաղանթով կամ խոնավ պարկագործվածքով, ջրի փոշիացում) կամ մակերևույթը պատում հատուկ թաղանթագոյացուցիչ **MASTERKURE** խառնուրդով:

Փաթեթավորում

MASTEREMACO S 488-ը փաթեթավորված է 25 կամ 30 կգ-անոց անջրանցիկ պարկերով:

Պահպանման պայմաններ

Պահպանել օրիգինալ պարկերով, չոր վայրում,
+5°C-+25°C ջերմաստիճանային պայմաններում:

Տեխնիկական բնութագրեր

Ցուցանիշ	Արժեք
Հարմար նստեցում	180-200մմ
Օդի ներգրավումը (ներքաշումը)	6%-ից ոչ շատ
Չզման ամրությունը 24 ժամ հետո ծռման դեպքում	5 ՄՊա-ից ոչ քիչ
Չզման ամրությունը 28 օր հետո ծռման դեպքում	8 ՄՊա-ից ոչ քիչ
Սեղմման ամրությունը, 24 ժամ հետո	28 ՄՊա-ից ոչ քիչ
Սեղմման ամրությունը, 28 օր հետո	60 ՄՊա-ից ոչ քիչ
Բետոնի հետ կցորդման ամրությունը 28 օր հետո	2,5 ՄՊա-ից ոչ քիչ
Սառնակայունությունը աղերում	300 ցիկլից ոչ քիչ
Առաձգականության գործակիցը	25000 ՄՊա
Սուլֆատակայունության գործակիցը	0,9-ից ոչ քիչ
Անջրանցիկությունը	12 մթն.-ից ոչ քիչ
Սահմանափակ վիճակում ընդարձակումը 24 ժամ հետո	0,05%-ից ոչ քիչ